ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ՄԻԽԱՅԻԼ ՊԻՈՏՐՈՎՍԿՈՒՆ «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ԵՒ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀՆԱԳԵՏՆ, ՏԻԱՐ ՄԻԽԱՅԻԼ ՊԻՈՏՐՈՎՍԿԻ, ՈՐ Ի ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹԻՒՆ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հոգու բերկրանքով ողջունում ենք Ձեզ եւ բերում Հայրապետական Մեր օրհնութիւնը, գնահատանքն ու բարեմաղթանքները՝ առ ազգս հայոց եւ Եկեղեցիս Հայաստանեայց Ձեր ունեցած սիրոյ եւ մատուցած բարի ու մեծարժան ծառայութիւնների համար:

Գիտութեան ու մշակոյթի անխոնջ գործչի Ձեր առաքելութեամբ արժեւորելով հայոց հարուստ եւ հինաւուրց մշակոյթը՝ որպէս հայ հոգու անկրկնելի արտայայտութիւն, Դուք շնորհակալ ներդրում ունէք այն ռուս մեծագործ ժողովրդին ու Էրմիտաժի բազմահազար այցելուներին ներկայացնելու գործում:

Առ ի գնահատութիւն հոգեւոր-մշակութային եւ եկեղեցասէր Ձեր գործունէութեան, յանուն հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամութեան ու համագործակցութեան Ձեր ազնիւ ջանքերի՝ Հայրապետական Մեր այս Կոնդակով սիրով շնորհում ենք Ձեզ Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու

Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Մեր հոգեբուխ աղօթքն է, որ Բարձրեալն Աստուած հանապազ Իր օրհնութեան ներքոյ պահի Ձեզ, Ձեր ընտանեաց անդամներին, Ձեր գլխաւորութեամբ՝ հանրաճանաչ Էրմիտաժի ողջ անձնակազմին: Մաղթում ենք Ձեզ քաջառողջ ու կորովաշատ

կեանքի բազում օրեր, ամենայն բարիք եւ մշտանորոգ յաջողութիւններ՝ ի շահ ռուսական եւ համաշխարհային գիտութեան ու մշակոյթի, որ ծառայում են ժողովուրդների երկխօսութեան վսեմ առաքելութեանը:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ». ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 6 Յուլիսի
ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 14